Թ Ա Ր Գ Ա Մ

Նյութերը վերատպված են Ընթերցողների մ
ԸՄԸ-ն պատասխանատվություն չի կրում թարգմ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԻ ՄԻՋՈՑՈՎ

Փոքրահասակ երեխաների ուսուցիչները հաճախ հարցնում են. «Մենք ինչպե՞ս կարող ենք գրելու և կարդալու հմտությունների վրա հիմնված քննադատական մտածողության ստրատեգիաները կիրառել մանկապարտեզային տարիքի մեր երեխաների հետ աշխատելիս: Մեր աշակերտները գրել, կարդալ չգիտեն»: Չնայած նրան, որ քննադատական մտածողության զարգացմանն ու ակտիվ ուսումնառությանը նպաստող մեթոդների մեծ մասը հիրավի ենթադրում են գրելու և կարդալու իմացություն, դրանցից շատերը կարելի է հարմարացնել նաև փոքրիկների համար:

Մենք վստահ ենք, որ դեռ նախքան գրաճանաչության (բառի դասական իմաստով) հմտություններ ձեռք բերելը նույնիսկ փոքրահասակ երեխաները կարող են սովորել քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնառության ակտիվ դերակատարները, համագործակցել իրենց դասընկերների հետ: Ավելին, մենք վստահ ենք, որ վաղ ծանոթությունը քննադատական մտածողությանը նպաստող հնարներին կարող է երեխաներին նախապատրաստել ապագայում գրել, կարդալ սովորելու համար:



Բազմաթիվ գիտնականներ և մանկավարժներ հավատացած են, որ «...ընթերցանության ուսուցումը կարող է ինչ-որ չափով տեղի ունենալ բուն ընթերցանական համատեքստից դուրս: Հիրավի, սկսնակ ընթերցողները կարող են որոշ հմտություններ (բարձրակարգ պրոցեսներ, ստրատեգիաներ, ունեցած գիտելիքների կիրառում) ավելի հեշտ սովորել հենց այդպես: Սա նշանակում է, որ կարդալու համար պահանջվող շատ հմտություններ կարող են ձևավորվել անգամ նախքան այն, որ տեքստ ասածը կներկայացվի երեխաներին» (Վան Դեր Բրոեկ և Քրեմեր, 2000, էջ 23):

Օրինակ՝ մանկապարտեզի երեխաներին կարելի է սովորեցնել քննադատաբար, ստեղծագործաբար մտածել դասարանային փորձառությունների և նրանց համար բարձրաձայն ընթերցվող պատմությունների միջոցով: Ինքնուրույն կարդալ տալու փոխարեն ուսուցիչը կարող է ինքը կարդալ նրանց համար և գրել նրանց հետ: Ուսուցիչը կարող է երեխաների համար նախապատրաստել որոշ ուսումնառական հնարավորություններ, ակտիվորեն զբաղեցնել և ուղղորդել, որպեսզի նրանք կշռադատեն իրենց փորձառությունները:

Սույն հոդվածում ցույց կտրվի քննադատական մտածողությունը զարգացնող ստրատեգիաները հարմարցնելու երկու ուրույն եղանակ. պատմվածքի բարձրաձայն ընթերցանություն հավելյալ վարժություններով և դասարանի խորազնին հետազոտում, որին կհաջորդի կշռադատման փուլը: Բացի այդ, հոդվածում դուք կգտնեք որոշ ընդհանուր առաջարկներ մասնավորապես ՔՄԶԿԳՄ ձեռնարկների հնարները (Սթիլ, Մերեդիթ և Թեմփլ, 1998) փոքրիկների կարիքներին հարմարացնելու վերաբերյալ:

ԲԱՐԾՐԱՁԱՅՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Փոքրիկների քննադատական մտածողությունը զարգացնելու նպատակով կարելի է պատմություններն ու այլ զանազան տեքստերը բարձրաձայն ընթեցել նրանց համար: Բարձրաձայն ընթերցանության վարժությունը պետք է կիրառվի *խթանում, իմաստի ընկալում, կշռադատում* համակարգով:

ԽԹԱՆՈՒՄԸ
Երեխաների նախապատրաստումը բարձրաձայն ընթերցանությանը

Մինչ բարձրաձայն կարդալ սկսելն ուսուցիչը պետք է օգնի երեխաներին մտածել իրենց իմացած բաների մասին, որոնք կարող են օգնել հասկանալու տեքստը: Կարելի է ակտիվացնել նախնական գիտելիքի մի քանի հնարավոր տեսակ:

1. Տեքստի տեսակը

Արդյոք դա պատմվա՞ծք է, վավերագրական նյու՞թ, թե՞ բանաստեղծություն: Օգնեք երեխաներին հասկանալ, թե իրենց լսելիք ժանրից նրանք ինչ պիտի ակնկալեն:

2. Հեղինակը

Արդյո՞ք նրանք ծանոթ են այս հեղինակի որևէ այլ գործի: Եթե այո, ապա ի՞նչ կարող են ակնկալել այժմ: Եթե նկարագարդ գիրք է, նույն հարցերը կարելի է տալ նկարչի մասին:

3. Վերնագիրը կամ կազմը

Ի՞նչ ենք տեսնում վերնագրի մեջ կամ կազմի վրա: Ի՞նչ գիտենք այս բաների մասին: Դատելով այդ բաներից, մենք ի՞նչ կարող ենք ակնկալել կամ կանխատեսել տեքստի բովանդակության մասին:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ
Փոխգործողություն բարձրաձայն ընթերցանության ընթացքում

Ընթերցանության ընթացքում երեխաներին առաջարկեք արձագանքել տեքստի բովանդակությանը (Քեմբել, 2001): Փոքրիկ երեխաները հաճախ են հանպատրաստից մեկնաբանություններ անում իրենց հետաքրքրող որևէ բանի վերաբերյալ: Ուսուցիչը պետք է հարգանքով ընդունի արտահայտած մտքերը և թույլ տա մյուսներին դրանց մասին իրենց կարծիքներն արտահայտել: Ուսուցիչը նաև կարող է տեքստը բաժանել հատվածների և յուրաքանչյուր հատվածի համար պատրաստել ուղղորդող հարցեր: Այս հարցերը պետք է երեխաներին խրախուսեն պատասխանել, արտահայտվել, ոչ թե տրվեն երեխաների լսելու հմտությունը ստուգելու միտումով: Ընթերցանության ընթացքում հաղորդակցությունը պետք է միտված լինի հետևյալին.

1. խթանել բազմազան, բարդ պատասխանները,
2. թույլ տալ երեխաներին պատասխանել բանալի ակնարկներին և կանխատեսել ու համադրել,
3. խրախուսել երեխաներին տալու իրենց սեփական հարցերը,

Ա Ն Ա Բ Ա Ր

հջազգային ընկերակցության (ԸՄԸ) թույլտվությամբ:
անված նյութերում տեղ գտած անճշտությունների համար:

4. ներգրավել երեխաներին զգացմունքային գնահատումների մեջ, ասենք՝ իրավիճակի, կերպարի կամ թեմայի վերաբերյալ,
5. օգնել երեխաներին կապ գտնելու տեքստի, իրենց, այլ տեքստերի, աշխարհի միջև,
6. ուշադրություն հրավիրել հեղինակի վարպետության վրա:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄԸ
Ընդլայնեք բարձրաձայն ընթերցանության փորձառությունը

Բարձրաձայն ընթերցանությունից հետո ուսուցիչը պետք է խրախուսի երեխաներին խորհելու տեքստի իմաստի մասին: Ուսուցիչը կարող է երեխաներին առաջարկել մտածել և արտահայտվել իրենց հայտնած կարծիքների մասին: Լավագույն դեպքում երեխաներն են սկսում քննարկումները, սակայն ուսուցիչն էլ կարող է ուղղորդել զրույցը: Կարելի է օգտագործել նախորդ փուլի ուղենիշերը:

Բացի այդ, երեխաները կարող են մեծապես շահել, եթե տեքստային աշխատանքն ընդլայնվի և նրանք դրանից բխող վարժություններ անեն, նկարեն, բեմադրեն, գրեն:

Աշխատանքի ընդլայնումը պետք է

1. բնականորեն բխի տեքստից,
2. ծագի երեխաների հետաքրքրություններից և հարցերից,
3. մղի երեխաներին մտածված ձևով վերագնահատելու տեքստը,
4. երեխաների մոտ ձևավորի ակնածալից վերաբերմունք կարդալ-գրելու հմտության և գրականության նկատմամբ:

Քսենյա Վիչիչը, որը Խորվաթիայի Ադրիատիկի ափին գտնվող սքանչելի քաղաք Ռիյեկայում աշխատող ՔՄՁԿԳՄ ուսուցչուհի է, մշակել է մի հիանալի նմուշօրինակ, թե ինչպես օգտագործել բարձրաձայն ընթերցանությունը քննադատական մտածողության զարգացման համար: Խթանման փուլում Քսենյան նստում է հատակին: Երեխաները, որ մեծ մասամբ մոտ 6 տարեկան են, նույնպես հատակին են նստում: Քսենյան ձեռքին նկարազարդ գիրք ունի, որ խոստացել էր կարդալ նրանց համար: Բայց մինչ սկսելը նա ցույց է տալիս նախօրոք գրքից պատճենահանած և պատին փակցրած վեց նկար և խնդրում է երեխաներին հորինել իրենց սեփական պատմությունը: Խրախուսելու համար Քսենյան սկսում է պատկերների նկարագրությունից: Նրանք միասին քննարկում են նկարները, և պատմվածքը հետզհետե սկսում է ձևավորվել:

Ըստ էության, այս վարժության նպատակն այն չէ, որ նրանք պատմվածքը պատմեն կամ ճիշտ կռահումներ անեն: Ավելի շուտ, նպատակը նրանց հետաքրքրելն է պատմվածքով: Այս կերպ նկարների մասին մտածելով՝ երեխաներն իրենց իմացածը կապում են պատմվածքի հնարավոր բովանդակության հետ:

Հետո Քսենյան բարձրաձայն կարդում է Ռաշել Այսադորայի «Խաչմերուկում» պատմվածքը: Իրադարձությունները կատարվում են Աֆրիկայում: Պատմվում է երեխաների մասին, որոնք սպասում են իրենց հայրերի վերադարձի՝ տասն ամիս հանքերում աշխատելուց հետո: Պատվածքի երեխաները սպասում են ամբողջ օրն ու ամբողջ գիշերը: Սպասելու ընթացքում նրանք երաժշտական գործիքներ են պատրաստում ու նվագում: Պատմվածքը կարդալու ժամանակ Քսենյայի սենյակում նվագարկչից հնչում է աֆրիկյան երաժշտություն:

Երբ պատմվածքն ավարտվում է, Քսենյան հարցերի միջոցով քննարկում է այն երեխաների հետ:

«Պատվածքի հայրիկները որտե՞ղ էին աշխատում: Արդյո՞ք հանքերը հեռու են: Ինչու՞ եք այդպես կարծում: Որևէ մեկն ուրիշ կարծիք ունի՞»:

Մի տղա հետաքրքիր պատասխան է տալիս: «Նրանք թաքնված են, պետք է փորել՝ նրանց գտնելու համար...»:

«Նրանց հայրիկները որքա՞ն են տանը մնում: Ինչու՞ եք այդպես կարծում: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ է նշանակում, երբ հայրիկը տնից հեռու տեղում է աշխատում»:

Այս հարցը սկիզբ է տալիս մեծ քննարկման, որովհետև մի քանի երեխա ասում է, որ իրենց հայրերը տնից հեռու են աշխատում, օրինակ՝ նավի վրա: Նրանք շատ հուզվում են, երբ խոսում են հայրիկների բացակայության ժամանակ իրենց տխրության մասին:

«Ինչու՞ մայրիկները չեն սպասում իրենց երեխաների հետ»:

Երեխաները թվարկում են բոլոր գործերը, որ մայրերը ստիպված են անել՝ խաչմերուկում սպասելու փոխարեն:

«Ինչպե՞ս պատահեց, որ երեխաներն ամբողջ գիշեր դրսում մնացին»:

Երեխաները բացատրում են պատմվածքի երեխաների պաճառները (հուզմունք), բայց նաև նշում են, որ, այդուհանդերձ, ամբողջ գիշեր դրսում մնալն այնքան էլ ճիշտ բան չէր: «Մայրիկը կարող էր անհանգստանալ, որ մեզ որևէ մեկը կարող է գողանալ...», - ասում է մի տղա:

«Ձեր կարծիքով, պատմվածքը որտե՞ղ է կատարվում»:

Առաջարկվում են բազմաթիվ երկրներ՝ Գերմանիա կամ Իտալիա (պատմվածքի անունները «ծիծաղելի են», գուցե գերմանական կամ իտալական՝ Զոլա, Թանդեկա, Սիֆո և այլն), Ամերիկա (ամերիկացիները եկել են ռազմական նավով՝ իրական դեպք, որ տեղի է ունեցել մեկ ամիս առաջ) և Քենիա (որովհետև երեխաները պատմվածքում սևամորթ են): Մի քանիսն ասում են, որ իրենք Իտալիայում ու Ռիջեյկայում էլ են տեսել սևամորթների:

«Դուք լսու՞մ եք երաժշտությունը: Ուշադիր լսեք: - Քսենյան բարձրացնում է ձայնը: - Սա ձեզ ի՞նչ է հիշեցնում»:

Երեխաներից մի քանիսն ասում են, որ երաժշտությունը «ծիծաղելի է», և որ նրանք առաջին անգամ են այն լսում, իսկ մի քանիսն ասում են, որ նման երաժշտություն լսել են հեռուստացույցով:

Քսենյան բերում է գլոբուսը: Բոլորը հավաքվում են դրա շուրջը՝ փնտրելով այն շրջանը, որտեղ նման երաժշտություն կարող էր հնչել: Բուռն քննարկման արդյունքում նրանք վերջապես համաձայնության են գալիս Աֆրիկայի վերաբերյալ:

Կշռադատման փուլն էլ ավելի խորացնելու համար Քսենյան հարցնում է երեխաներին, թե արդյոք կուզե՞ն պատրաստել իրենց գործիքները և նվագել նման երաժշտություն: Նրանք ուրախությամբ ընդունում են առաջարկը և չափազանց ոգեշնչված սկսում են գործիքներ պատրաստել դարտարկ տուփերից, կափարիչներից, բրնձով, ավազով լցված պլաստիկ կամ ապակյա շշերից, փայտիկներից, ռետինե օղակներից և այլն: Նրանք այս առարկաներն են օգտագործում, որովհետև պատմվածքի երեխաները մոտավորապես նույնն էին օգտագործել: Երբ գործիքները պատրաստ են, երեխաներն սկսում են դրանք նվագել ծայնարկիչի իսկական երաժշտությանը զուգընթաց: Նրանք նույնիսկ սկսում են երգել ինչպես պատմվածքի երեխաները՝ «Մեր հայրիկները գալիս են տուն, մեր հայրիկները գալիս են տուն»:

Պատմվածքի *կշռադատումը* շարունակելու համար երեխաները հաջորդ օրը պատրաստում են ծիծաղաշարժ նկարաշար. 12 շատ գեղեցիկ նկար իրենց մեկնաբանություններով, որ ուսուցչուհին նրանց փոխարեն գրի է առնում թղթի վրա: Այս հետամտային վարժությունները երեխաներին շատ խորն են ներգրավում պատմվածքի մեջ և, որ ամենակարևորն է, պատմվածքը կապում են նրանց սեփական փորձառությանը:

(Շարունակությունը՝ հաջորդիվ)

ՔԵՐՈԼ ԼՈՐԻՑԵՆ, ՇԵՐՈՆ Բ. ՔԼԵՋԻԵՆ, ՎԻԺՆՅԱ ԳՐՈՋԴԱՆԻ

«Պերեմենա», N6, 2000 թ., էջ 27

Թ Ա Ր Գ Մ

Նյութերը վերատպված են Ընթերցողների մ
ԸՄԸ-ն պատասխանատվություն չի կրում թարգ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԻ ՄԻՋՈՑՈՎ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Դասարանական փորձառություն ասածը ենթադրում է, որ ուսուցիչն ստեղծում է երեխաների զարգացմանը համապատասխանող իրավիճակներ, երբ նրանք կա՛մ ինչ-որ բան են հետազոտում, կա՛մ ինչ-որ բանի են ակտիվորեն մասնակցում (Լորիձեն և Ջեգեր, 1997): Սա ներառում է խաղ, բեմականացում, ավազի և ջրի տուփեր, փոքրիկ առարկաներ, խաղալիքներ և այլն: Այս փորձառությունները դառնում են քննադատաբար մտածելու հնարավորություններ, եթե ուսուցիչը խոսում է երեխաների հետ և նրանց էլ մղում է խոսելու միմյանց հետ դրանց մասին: Ուսուցիչը կարող է նաև գրի առնել երեխաների մտքերը ցուցաթղթին, որպեսզի նրանք տեսնեն, որ կարդալն ու գրելը միջոց են մտքերն ու փորձառությունները գրանցելու համար:

Բնագիտության (Չեյլ, 1997) և հասարակագիտության (Քրոֆորդ, 1996) ուսումնական ծրագրի հեղինակներն առաջարկում են բազմաթիվ դասարանային վարժություններ, որոնք օգնում են զարգացնել երեխաների մտածելու և հասկացություններ կառուցելու հտությունները: Հետևյալ օրինակը, որ մշակել է այս հոդվածի առաջին հեղինակը, փորձարկվել է և՛ Խորվաթիայում, և՛ ԱՄՆ-ում:

Մանկապարտեզային տարիքի երեխաների համար նախատեսված այս բնագիտական հետախուզումը ներառում է սովորական նյութերից պատրաստված գնդակներ և խողովակներ: Յուրաքանչյուր երեխային կամ զույգին պետք կգան տարբեր տեսակի հաստ թղթերից ոլորած խողովակներ: Օրինակ՝ մի խողովակը կարող է լինել սովորական թղթից, մյուսը՝ զմռնիտից, իսկ երրորդը ներսից կարելի է պատել կպչուն ժապավենով: Նրանց պետք կգա նաև մի քանի գնդակ, օրինակ՝ մետաղե գնդակ, փայլաթղթե գնդակ, փայտե գնդակ, սեղանի թենիսի գնդակ:

Հետախուզումն սկսվում է պարզ ցուցադրումով: Ուսուցիչը կամ աշակերտը գնդակը գլորում է խողովակի միջով: Գնդակն ընկնում է հատակին: Հետո նա վերցնում է մի փոքրիկ առարկա (ծալած թուղթ, տուփ), որը կոչվում է «բռնիչ», և տեղադրում է այն խողովակի ծայրի մոտ այնպես, որ գնդակը սեղանից չընկնի հատակին: Նա նյութերը տալիս է երեխաներին և առաջարկում է, որ նրանք խաղան ու հետազոտեն: Թող նրանք ցույց տան իրենց հնարամտությունը: Ուսուցիչը դիտարկում է նրանց՝ տեսնելու համար, թե երեխաներն ինչպիսի զբաղմունքներ են գերադասում, և այդպիսով որոշում է, թե նրանք ինչ գիտեն նման նյութերով աշխատելու մասին:

Հաջորդ քայլը ներառում է հարցում ու քննադատական մտածողության կիրառում:

1. Հավաքեք նյութերը, իսկ երեխաներին խմբով տարեք դրանցից հեռու:

2. Թող երեխաները կազմեն այնպիսի հարցեր, որոնց նրանք կկարողանային պատասխանել՝ օգտագործելով նյութերը: Հարցերը տեղադրեք աղյուսակում:

(Ահա մի օրինակ մանկապարտեզային մի դասից:

«Ո՞ր գնդակն է «բռնիչը» հրում ամենահեռուն»:

«Ո՞ր գնդակներն են գլորվում կպչուն խողովակով»:

«Ո՞ր գնդակներն են ավելի արագ գլորվում զմռնիտից խողովակով»):

3. Քննարկեք և օրինակով ցույց տվեք, թե ինչպես կարելի է հետազոտությամբ պարզել ամենադժվար հարցերը:

4. Թող երեխաները փորձարարությամբ պատասխանեն հարցին:

5. Գրանցեք գտած պատասխանները: Երեխաները հայտնում են իրենց մտքերը, իսկ ուսուցիչը զուգահեռ գրում է:

(Օրինակ մանկապարտեզային մի դասից:

«Գոլֆի գնդակը ծիծաղելի ձայն է հանում կպչուն խողովակով գլորվելիս»: «Խողովակի թեքման անկյունն ազդում է գնդակի արագության վրա»:

«Մետաղե գնդակը ամենաարագն է գնում, որովհետև այն ամենածանրն է»):

Կշռադատման փուլն իրականացված է, քանի որ երեխաներն իրենց հայտնագործությունները հետազոտում

Ա Ն Ա Բ Ա Ր

միջազգային ընկերակցության (ԸՄԸ) թույլտվությամբ:
մանված նյութերում տեղ գտած անճշտությունների համար:

են կարդալու ու գրելու միջոցով, դրանք կիսում են ուրիշների հետ, իրենցը համեմատում են ամբողջի խմբինի հետ:

Ուսուցիչը նախադասություններ է օգտագործում գտած պատասխանները աղյուսակում գրանցելու համար: Երեխաներին խնդրեք ձևակերպել իրենց եզրահանգումները և դրանք նույնպես գրանցեք աղյուսակում: Հետո ուսուցիչն ու աշակերտները միասին կարդում են աղյուսակը:

ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Քննադական մտածողությունը երկարաժամկետ նպատակ է, և վերը նկարագրված հետազոտական վարժությունները դրա ամենա-ամենասկիզբն են: Հետևաբար, չպետք է ակնկալել, որ երեխաները միանգամից կկարողանան հասկացություններն ընկալել այնպես, ինչպես մեծահասակները: Պարզապես պետք է հարգանքով վերաբերվել նրանց եզրահանգումներին և ընդունել դրանք որպես մտավոր գործունեության հստակ ցուցիչներ:

Հարցեր աշակերտների ընկալման գնահատման համար

1. Արդյո՞ք երեխան փորձարկում էր: Օգտագործու՞մ էր, արդյոք, տարբեր կոմբինացիաներ:

2. Արդյո՞ք երեխան անում էր դիտարկումներ և գալիս էր եզրակության կամ համեմատության:

3. Արդյո՞ք երեխան հետևում էր աղյուսակին և հասկանում էր, որ դա տվյալների և մտքերի գրանցման համար է:

ԿԱՐԴԱԼՈՒ ԵՎ ԳՐԵԼՈՒ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՐԱՏԵԳԻԱՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԸ

Որոշ վարժություններ, որոնք նախատեսված են կարդալու և գրելու միջոցով քննադատական մտածողության զարգացման համար, կարող են մասնակի փոփոխություններով կիրառվել նաև երեխաների՝ դեռևս ինքնուրույն գրել-կարդալ չիմանալու դեպքում: *Իմացիր-հետաքրքրվիր-սովորիր* աղյուսակի հարմարեցված տարբերակը, օրինակ, միայն պահանջում է, որ ուսուցիչը երեխաների հետ քննարկելուն զուգահեռ լրացնի այն: *Մտածիր-զույգ կազմիր-պատմիր* վարժությունը միայն պահանջում է, որ երեխաները իրար հետ խոսեն: Փոքրիկների մտավոր գրոհի ժամանակ ուսուցիչը կարող է գրանցել նրանց հայտնած մտքերը, կարող է և թողնել, որ վարժությունն արվի զուտ բանավոր: Մի շարք վարժություններում գրած բառերը կարող են փոխարինվել նկարներով և պատկերներով: Դրանցից են *խմբավորումը, ԻՀՍ-ն*: Ուղղորդված ընթերցանություն և մտածողություն *(ՈԸՄ)* վարժությունը դառնում է ուղղորդված ունկնդրման և մտածողության վարժություն *(ՈՈՄ)*: Դադարի պահերին ուսուցիչը կարող է կանխատեսումները գրի առնել աղյուսակում, կամ էլ երեխաները կարող են նկարներ օգտագործել դրա փոխարեն:

Ազատ շարադրանքի կամ *«վառվող գրչի»* վարժության ժամանակ երեխաները կարող են պարզապես ազատորեն, անկաշկանդ ինքնաարտահայտվել: Սա կարելի է անել հնարովի հեգման միջոցով կամ կարելի է ուսուցչին օգտագործել որպես գրագիր: Նպատակին կարելի է հասնել՝ վարժությունը վերածելով *«վառվող գրույցի» և «ազատ խաղի»*: Երեխաները կարող են օգտագործել խաղադեկորներ, տիկնիկներ, խամաճիկներ կամ այլ առարկաներ՝ պամություն «ցույց տալու» համար:

«Խորանարդումը», օրինակ, կարելի է հարմարեցնել կարդալ չիմացող երեխաների համար գրավոր խոսքը բանավորով փոխարինելու միջոցով: Խորանարդի վրա հարց/հուշումները կարերի է բառերի փոխարեն արտահայտել խորհրդանիշներով կամ նկարներով: *Փոխգործում Նշանների Համակարգը* կարող է կիրառվել բարձրաձայն ընթերցանության ժամանակ: Կարելի է երեխաներին բաժանել համապատասխան նշաններով քարտեր, որպեսզի նրանք պետք եղած ժամանակ դրանք վեր բարձրացնեն:

«Զույգով կանխատեսումը» (բանալի բառից բխող կանխատեսում) կարելի է հարմացնել՝ երեխաներին բաժանելով նկարներ կամ առարկաներ, որոնք նրանք կարող են օգտագործել բառերի փոխարեն: Համագործակցային ուսումնառության հնարները կարելի է այնպես փոփոխել, որ կարդալն ու գրելը հանձնարարության մաս չկազմեն, իսկ եթե դասարանում կարդացող երեխա կա, ապա նրան կարելի է առանձին դեր տալ:

Ավանդաբար գրել-կարդալու վրա հիմված քննադական մտածողության ստրատեգիաները փոքրիկների հետ կիրառելիս հաջողության հասնելու համար անհրաժեշտ է ամեն ինչ ծրագրել և իրականացնել *խթանման-իմաստի ընկալման-կշռադատման* շրջանակներում: *Խթանման* փուլում ուսուցիչը պետք է նախապատրաստական աշխատանք տանի և կարողանա շարժել երեխաների հետաքրքրությունը: *Իմաստի ընկալման* ժամանակ ուսուցիչը կարող է երեխաների համար ընթերցել որևէ տեքստ և հուշել նրանց, որ ուշադիր լսեն ու մտածեն իմաստի մասին: Նա կարող է երեխաներին ներգրավել նաև որևէ գբաղմունքի մեջ (բնագիտական, երաժշտական, մաթեմատիկական և այլն) և խնդրել նրանց կազմել հարցեր, որոնց իրենք իսկ հետո կարող են պատասխանել: *Կշռադատման* փուլում ուսուցիչը պետք է օգնի երեխաներին քննարկել և խորհել այն մասին, ինչն իրենք սովորել են վարժության կամ ընթերցանության միջոցով: Դիտարկելով, թե ինչպես են երեխաները փոխգործում նյութերի կամ տեքստի հետ, ուսուցիչը գնահատում է երեխաների ուսումնառությունը:

Ամփոփելով՝ ասենք, որ որևէ պատճառ չկա քննադատական մտածողությունը հետաձգելու մինչև երեխաների գրել-կարդալ սովորելը: Երեխաներն ունակ են քննադատաբար մտածել ցանկացած տարիքում, և ուսուցիչների խնդիրն է նրանց այնպես սովորեցնել, որ կարդալն ու գրելը դառնան մտածելու շատ կարևոր (սակայն ոչ ամենակարևոր) միջոցները:

ՔԵՐՈԼ ԼՈՐԻՏԵՆ, ՇԵՐՈՆ Բ. ՔԼԵՋԻԵՆ,
ՎԻԺՆՅԱ ԳՐՈՔԴԱՆԻ

«Պերեմենա», N6, 2000 թ., էջ 29